

ՄՐԱԶԱՆ ՀԱՅՐԸ ՆԱԽԱԳԱՀԵՑ ԼԱ ԳԱՆԻԱՏԱՅԻ ԵՒ ՔՐԷՍԷՆԹԱ ՀՈՎԻՏԻ
ՏԱՐԵԿԱՆ ՃԱՇԿԵՐՈՅԹ-ՊԱՐԱՀԱՆԴԵՍԻՆ
ԼԱ ՔՐԷՍԷՆԹԱՅԻ «ՌԻՐԱՐՏՈՒ» ՃԱՇԱՐԱՆԻՆ ՄԷՋ

Շաբաթ, Նոյեմբեր 7ի երեկոյեան ժամը 8:00ին, Լա Քրէսէնթայի «Ուրարտու» ճաշարանին մէջ Սրբապան Հօր Նախագահութեամբ տեղի ունեցաւ Լա Գանիապայի եւ Քրէսէնթա Հովիտի Հայց. Առաքելական Եկեղեցւոյ Տարեկան Ճաշկերոյթ-Պարահանդէսը, որ Ծխական Խորհուրդի համագործակցութեամբ կազմակերպուած էր Ծուխի Տիկնանց Միութեան կողմէ:

Այս ձեռնարկը նուիրուած էր Ծուխի հաստատման 5րդ տարեդարձին: Աղօթքով բացուող կատարեց Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւը՝ Արժ. Տ. Յովսէփ Աւագ Քինյ. Յակոբեան: Ապա հանդիսավար Տոբթ. Սիմոն Սիմոնեան ներկաներուն ուշադրութիւնը հրաւիրեց դիտելու Ծուխի առաքելութեան նուիրուած 10 վայրկեան տեւողութեամբ տեսաժապաւէնը:

Տեսաժապաւէնի ցուցադրութենէն յետոյ Տոբթ. Սիմոնեան հրաւիրեց Տիկնանց Միութեան Արեւնապետուհի՝ Տիկին Լենա Սիմոնեանը իր խօսքը արտասանելու: Ան բարի գալուստ մաղթեց բոլորին եւ շնորհակալութիւն յայտնեց, որ չէին մերժած իրենց ներկայութեամբ պօրավիզ կանգնելու Ծուխին: Ապա խօսքը փրուեցաւ Ծխական Խորհուրդի Արեւնապետ՝ Պրն. Վահան Ալապարտեանին, որ իր երախտագիտութիւնը յայտնեց Առաջնորդ Սրբապան Հօր եւ Թեմական Խորհուրդին հոգատար վերաբերմունքին եւ յարատեւ օգնութեան համար եւ Ծխական Խորհուրդի բոլոր անդամներուն:

Տոբթ. Սիմոն Սիմոնեան ողջունեց ներկայութիւնը Պրոպէնքի Հայց. Առաքելական Եկեղեցւոյ, Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Խաթակ Քինյ. Շահպապեանի գլխաւորութեամբ, Կլէնտինի Սուրբ Գէորգ Հայց. Առաքելական Եկեղեցւոյ, Արժ. Տ. Մամբրէ Քինյ. Քեսապեանի գլխաւորութեամբ եւ Առաջնորդարանի Հանգանակիչ Յանձնախումբի Արեւնապետ՝ Տէր եւ Տիկին Անդրանիկ Զօրայեանի: Այնուհետեւ տեղի ունեցաւ մոմավառութիւն եկեղեցւոյ գլխաւոր հովանաւորներուն համար:

Այս տարուան պատիւին արժանացաւ Թեմական Խորհուրդի Արեւնապետուհի եւ Լոս Անճելըսի Սուրբ Յակոբ Հայց. Առաքելական Եկեղեցւոյ երկար տարիներու անդամուհի՝ Տիկին Լիլի Ռինկ Պալեան, որուն ծանօթացուց Տոբթ. Սիմոնեան, ապա Տիկին Լենա Սիմոնեան Տիկնանց Միութեան եւ Ծխական Խորհուրդի կողմէ արծաթեայ խաչ մը նուիրեց իրեն: Տիկին Պալեան ուրախութեամբ իր շնորհակալութիւնը յայտնեց այս պատուին համար:

Առաջնորդ Սրբապան Հայրը գնահատեց Ծխական Խորհուրդին, Տիկնանց Միութեան եւ բոլոր կազմակերպութիւններուն կատարած հրաշալի ծառայութիւնը՝ մասնաւորաբար շեշտելով, որ այդ բոլորին գլխաւոր առանցքը կը հանդիսանայ Հոգեւոր Հովիւը՝ Արժ. Տ. Յովսէփ Աւագ Քինյ. Յակոբեան, որ իր կարողութիւնները կը փրամադրէ Ծուխի առաւել բարգաւաճման եւ պայծառութեան: Ապա իր խօսքը ուղղելով պատուի արժանացած Տիկին Լիլի Ռինկ Պալեանին, ըսաւ. «Տիկին Լիլի Ռինկ Պալեան Առաջնորդարանին հրեշտակն է, առանց անոր ժպիտին եւ կատարած հրաշալի ծառայութեան, Առաջնորդարանի շատ մը աշխատանքները չէին կրնար իրագործուիլ: Լիլի Պալեան հանդիսացած է միշտ ժիր, աշխոյժ, առագաշարժ, աշխատասէր եւ նուիրեալ Տիկին մը: Ահա իր բարի յարկանիշները, որոնք կը վարդարեն իր սիրտը եւ հոգին: Մենք ուրախ ենք, որ շրջապատուած ենք այսպիսի նուիրեալ եւ քաջ, հաւատքով լեցուն հայորդիներով: Աստուծոյ օրհնութիւնը եւ սէրը կը հայցենք ձեզի՝ սիրելի Տիկին Լիլի Պալեան: Կ'աղօթենք, որ Ամենակալն Աստուած ձեզի, ձեր պաւակներուն եւ թոռներուն պարգեւէ երկար տարիներու քաջառողջ կեանք, որպէսզի շարունակէք ձեր հոգեւոր, նուիրեալ եւ հաւատքով լեցուն ծառայութիւնը մեր Թեմէն ներս»: Ապա արծաթեայ խաչ մը նուիրեց իրեն:

Իր խօսքին մէջ Սրբապան Հայրը գնահատեց եւ օրհնեց Ծուխի երիտասարդուհիներէն՝ 15ամեայ Լիլի Ջորպաճեանը, որ ուխտած էր Լա Գանիապայի եւ Քրէսէնթա Հովիտի նոր եկեղեցւոյ կալուածին ի նպաստ դուռ առ դուռ պրըփիլ եւ նուիրահաւք կատարել եւ կրցած էր առաջին հունձքը ունենալ՝ հաւաքելով 1,000 Տոլար: Ահա այսպիսի երիտասարդուհիներով է, որ կը պայծառանայ եկեղեցին՝ Աստուծոյ Տունը: Սրբապան Հայրը արծաթեայ փոքրիկ խաչով մը պարգեւատրեց Լիլի Ջորպաճեանը եւ գնահատեց իր ծնողքը՝ Տէր եւ Տիկին Յարութ եւ Երան Ջորպաճեանը եւ Ջորպաճեան ընտանիքը, որոնք վստահաբար թիկունք կանգնած էին Լիլիին՝ իրագործելու համար իր ուխտը:

Այնուհետև Հոգեւոր Հովիւը, Ծխական Խորհուրդի, Տիկնանց Սիութեան անդամ-անդամուհիները եւ Տիկին Լիլի Պալեան, կտրեցին Ծուխի հաստատման 5րդ փարեդարձի եկեղեցւոյ տեսքով կարկանդակը: Ճաշկերոյթ-Պարահանդէսը անցաւ ուրախ մթնոլորտի մէջ: